ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

2007թ. ՄԱՅԻՍԻ 31-Ի ՍԴԱՈ-71 ԵՎ 2007թ. ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ՍԴԱՈ-86 ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. «2007 թվականի մարտի 19-ին Մեղրիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում» և «2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև մաքսային բնագավառում համագործակցության և փոխադարձ աջակցության մասին համաձայնագրում» ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերի դատաքննությունն սկսել 2007թ. հուլիսի 10-ին։

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած համարել համապատասխանաբար՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. մայիսի 31-ի ՍԴԱՈ-71 և 2007թ. հունիսի 13-ի ՍԴԱՈ-86 աշխատակարգային որոշումների 2-րդ կետերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25 հունիսի 2007 թվականի
ՍԴԱՈ-91